

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի կորագրատան մէջ:

Օտարազգայացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւնները: — Ներքին տե-
սութիւն: Նամակ փոփոխ: Նամակ Նուխուց:
Նամակ Ղուբայից: Ներքին տուրք: — Արտա-
քին տեսութիւն: Անգլիական համայնքների
նկար: Պետութիւնների ծովային ցոյցը: Բազմա-
նամակ Թիֆլիսից: — Սլաւոն հեռագիրներ: —
Յայտարարութիւններ:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ- ՆԵՐԸ

Թիֆլիսաց հայերի մասին քա-
ղում ենք զանազան լրագիրներից
հետեւեալ տեղեկութիւնները:

Փարիզում հրատարակվող «Dé-
bats» լրագիրը նորերումն մի մեծ
յօդուած է տպել Թիֆլիսաց հա-
յերի վերաբերութեամբ, «La
question Arménienne» վերնա-
գրով: Կաշխատեց ծանօթացնել
մեր ընթերցողներին այդ նշանա-
ւոր յօդուածի հետ: Լրագիրը ա-
սում է որ հայերը ցոյց են տուել
իրանց ընդունակութիւնը կառա-
վարչական և զինուորական արհես-
տի մէջ և բերում է մի շարք յայտ-
նի ազգանունների, ինչպէս կոմս
Լօրիս-Մէլեքով, Տէր-Ղուկասով,
Նուբար-Փաշայ և շատ ուրիշներ:
Յօդուածը վերջանում է դորա-
նով, որ յայտնում է թէ Թիֆլի-
սաց հայերը երբեք չեն ապա-
տամբել, ինչքան էլ անտանելի
լինի նրանց դրութիւնը, բայց բո-
լորն էլ կը դադրեն իրանց հայ-
րենից և կընկնեն Ռուսաստանի
գիրկը, եթէ ինքնավարութիւն չը
ստանան:

Կ. Պօլսի մէջ հրատարակվող
Ֆրանսիական «Semaphore» լրա-
գիրը հաղորդում է Ներսէս պատ-
րիարքի կողմից եւրոպական դես-
պաններին ուղղած թղթի բովան-
դակութիւնը, որի մէջ նա բողո-
քում է Թիֆլիսաց արտաքին գոր-
ծերի միջնորդութեան դէմ, որ
ցոյց է տուել իր պաշտօնական
գրութեան մէջ, իբր թէ հայերի
Թիֆլիս Հայաստանում 17% է
կազմում ընդհանուր ազգաբնա-
կութենից:

Մի ուրիշ ֆրանսիական լրա-
գիր, որ նոյնպէս Կ. Պօլսի մէջ է
հրատարակվում, այն է «Stam-
boul» լրագիրը հաղորդում է հե-

տեւալ տեղեկութիւնները: Թիֆլի-
սաց կայսերական կոմիտէները
կազմելով վերանորոգութիւնների
յանձնաժողով Վան նահանգի
մէջ, նշանակեցին այդ յանձնաժո-
ղովի 17 անդամների մէջ 9
Թիֆլիս անդամներ, 6 հայ ան-
դամներ, 1 ասորի և մի հրէայ:
Յանձնաժողովի հայ անդամները
բոլորն էլ անմիջապէս իրանց հը-
րաժարականը տուին, յայտնելով
որ վեց մարդ չեն կարող ներկա-
յացնել մի յանձնաժողովի մէջ
հայոց ազգաբնակչութեան շահերը
մի նահանգում, որտեղ հայերը
մեծամասնութիւն են կազմում:
Նրանք պահանջում են որ հայ
անդամները յանձնաժողովի մէջ
աւելի բազմաթիւ լինեն, քան թէ
Թիֆլիսը:

Նոյն լրագրում կարդում ենք
որ Վանի անգլիական հիւպատոսը
հաղորդեց սովատանջներին օգնող
Կ. Պօլսի հայոց մասնաժողովին,
որ սովը Հայաստանում շարու-
նակվում է և նիւթական օգնու-
թիւն ինդրեց մասնաժողովից, որ
անմիջապէս 500 լիւրա հասցրեց
Վան քաղաքը:

«Stamboul» լրագիրը զարմա-
նում է թէ Լյոզըրում ուսւ հիւ-
պատոսը ինչ շարժառիթներից
դրված նորերումն զեկուցում
տուեց կենտրոնական մասնաժո-
ղովին, որի մէջ յայտնում է թէ
սով ամենեւին չը կայ Հայաստա-
նում:

Ներսէս պատրիարքը նորերումն
թա գրի Ներկայացրեց Բ. Դը-
րանը, որի մէջ նկարագրում է
Հայաստանի անտանելի դրութիւ-
նը այդ նահանգում թէ տիրող
սովի և թէ քիւրդերի հարստա-
հարութեան պատճառով:

Նիւքիական «Daily News» լը-
րագիրն գրում են Լյոզըրումից որ
այդ քաղաքի ֆրանսիական նոր
հիւպատոս պ. Լափոստ ողբու-
րած կերպով ընդունվեցաւ Լյոզ-
րումի հայ ազգաբնակչութեան կող-
մից: Պ. Լափոստ զգացմունքով
լի մի ճառ ասեց իրան ընդունող
հայերին, և յայտնեց հետեւեալ
միտքը: «Շնորհակալութիւն յայտ-

նելով ձեր ինձ արած սիրալիւ ըն-
դունելութեան համար, ես հաս-
կանում եմ որ հայերը այն պատ-
ճառով ինձ ողբուրած ընդունում
են, որ մինչև այժմ Հայաստան
ուղարկվող հիւպատոսները, մա-
նաւանդ Բիկոնաֆիլդի միջնորդու-
թեան ձեռքով ուղարկված ներ-
կայացուցիչները, Թիֆլիսեաց
վերաբերվում ձեր ազգային ճըղ-
տուններին, պաշտպանում էին
քիւրդերին և մինչև անգամ Հա-
յաստանի անունը Բիւրդիստանի
փոխեցին: Հաստատ է որ ֆրան-
սիան կամենում է տարածել իր
ազդեցութիւնը Փոքր-Ասիայում,
բայց նոր ֆրանսիական կառավա-
րութիւնը կը պաշտպանի քրիս-
տոնեայ փոքր ազգութիւնները,
առանց հարցնելու արդեօք նրանք
կաթօլիկ դաւանութեան են պատ-
կանում, թէ ոչ»:

Կ. Պօլսի Թիֆլիս լրագիրները
շարունակում են զրգուել ժողովր-
դի մէջ մահմետական փանատիկո-
սութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓՈԹԻՅ

Յունիսի 27

Հաւարական գործով աղբիւ ամսին փոփ հա-
ղակվով, թող տուէք ինձ յայտնել ձեզ իմ առա-
ջին տպաւորութիւնը այդ քաղաքի մասին:

Իժմի ձախ ափում տարածված այդ փոքրիկ
քաղաքը ունի շատ ընդարձակ և լայն փողոցներ
բաւականին յարմարութեամբ շինված տներով,
դուրաններով, որոց ամենամեծ մասը փայտաշէն
է: — Տուրեալը այս քաղաքում բաւական ընդար-
ձակ է: — Ռուսաստանի ալիւրի մանաւանդ մեծ
առեւտուր է լինում: Անգաղաք եկած ալիւրը մե-
ծամեծ քանակութեամբ, անդադար սպառվում
է, վաճառահանվելով կովկասեան և Անդրկովկա-
սեան զանազան քաղաքները: Օրգասայի, Ռուստովի
ալիւր վաճառող յայտնի վաճառականները այս-
տեղ իրանց սեպչական տներ և գործակաւորներ
ունեն: Յորեանը և մանաւանդ դարին նոյնպէս
շատ է վաճառահանվում:

Ինտիկիները ոչ այնքան բազմութեամբ, որքան
բազմաթիւութեամբ շատ աչքի են ընկնում:

Եւրոպացի, ասիացի և ալիւրիկցի (վերջինից
4 հոգի միմիայն տեսայ) իրանց լեզուով, չորերով
և կենցաղավարութեամբ առանձնապէս զբաւում
են ճանապարհորդին: Քաղաքային պարտէզում
(առձեռք ժամանակ այդտեղ եղող բերդի արե-
մտեան պատի մի փոքրիկ մասն է մնում այժմ)
բազմաթիւ կանայք ուսւ, ֆրանսիացի, հայ, յոյն,
վրացի, մենգրել և հրէայ, իրանց խայտաճամուկ
ազգային զգեստներով զօրված համարձակ ձեւում
են և ականջի թմբուկ պատուող մի զինուորա-
կան նուագախմբի զուգուցով զուարճանում կար-
ծես: Փոթիի գործերի և այդ նուագախմբի ածած

եղանակների մէջ շատ զանազանութիւն չը պիտի
լինի կարծեմ, թէ, ինչպէս ասացին, այդ նուա-
գախմբը քաղաքը իր հաշուով է պահում, դոհե-
լով տարեկան բաւական նշանաւոր գումար: Վատ
չէր լինի եթէ փոփեցիք գործերի կուլտուցներով
բաւականանային և այդ գումարը գործադրէին
առողջապահական մի քանի բաների, որոց այնքան
կարօտ է այդ քաղաքը: Փոթիում կայ փողովարան,
որի համար գլխաւորապէս կարծեմ վարձված է
միջակ նուագախմբը, հինգ հիւրանոց, տանից
աւելի կափէներ, որոնք եւրոպական կափէների
ամենահեռաւոր նմանութիւն ունեն, — բաւականու-
թիւն տալով և ասիացու ճաշակին: Լաւ սպիտակ
հացի ֆունտը արժէ 5 կ., իսկ սև հատարակինը
4 կ., — մսի տակսան 15 կ. է, բայց 17 կոպէկից
երէք պակաս չեն տայ: Մսավաճառները և հաւա-
պանները այտուղ, ասում են, իրանց կանոնադրու-
թեամբ շատ յայտնի են: Օրինակ բոլորը տանելի
տակաւով թէ 1 բ. 20 կ., բայց 3 բ. պակաս ձեզ
չեն տանում, չը նայելով նոյն իսկ պօլիցիակների
առաջարկութեանը: Գովական և փառաւոր կա-
մուրջը, որ Իժմի վրա է ձգված, շատ նեղ է:

Այնքան յարմարութեան համար յատկացրած
մի կամքի համար դա մի մեծ պակասութիւն է:
Վանեցի և մեցի մշակների շատութիւնը և ճար-
պիկութիւնն ու գործունէութիւնը տուրաւաւու-
թեան գլխաւոր շարժիչն է:

Մօտ 20 տնաւոր մշտաբնակ հայեր կան և բա-
ւականաչափ ժամանակաւորապէս բնակվողները դը-
րեթէ բոլորն էլ քովսիւթներն: Ունեն մի փայ-
տաշէն եկեղեցի և մի Տէր-Գաւիթ անունով քա-
հանայ, որից ամենքն էլ անխորի սաստիկ դժգոհ
են: Փոթիի նման տեղում հայութեան պատուին
համար գէթ լաւ քահանայ պէտք է ունենալ: Ինձ
ասացին որ քահանայ տարեկան մինչև 1500 բ.
արդիւնք կարող է ունենալ: Ռուսական փայտաշէն
եկեղեցին համեմատաբար աւելի լաւ է: Փոթիում
կայ և քաղաքային ուսումնարան, որը այսօր դոց լի-
նելով չը կարողացայ հանդիպել: Ռուսւնարանի դու-
թում մի քանի մարմնամարզական գործիքներ կան:
Փոթիի թէ մշտաբնակ և թէ ժամանակաւոր կեր-
պով կեցող հայք միմեանց հետ սիրով են ապ-
րում: Բացի այն նուէրներից, որ մինչև հիմայ այդ
աղիւ մարդիկը արին յօգուտ Վապուրականի
սովալուկներին, վերջին օրերումն կրկին մօտ 300
բ. հաւաքել էին և ուղղում էին շուտով ուղարկել
«Մշակին»:

Այն յարգը և արժէքը ինչ որ հողը փոթիում
ունէր պատերազմից առաջ, այժմ բոլորովին կո-
րած է և 3000 բ. առաջ գնահատվող հողը այժմ
500 բ. կը տան և աւելող չը կայ: Բացի Բաթումի
դրաւելը, ասացին, կան և մի քանի ուրիշ պատճառ-
ներ, հաւանականաբար կլիմայական: Տները և կըր-
պակները համեմատաբար լաւ վարձ են տալիս
իրանց տէրերին: Փոթիին և իր շրջական հարուստ
է բուսականութեամբ, որոց միակ ազդեցութիւնը
կարծես լինի որ մարդ կարողանում է այդ ճահ-
ճուտ և տղմուտ օրերումն փոքր ինչ օր քաշել:
Այսօր դեռ ապրիլի 27-ն է և ճաշին անտանելի
չօղ արաւ:

Տեղական հայք լինելով զանազան քաղաքներից
և աշխարհներից եկած, բնականապէս ունեն իրանց
բարբառը, բայց ես շատ զարմացայ երբ յանկարծ
տեսնում եմ քաղաքային պարտէզում եւրոպա-
կան շուրեր հագած մի կին իր երկու փոքրիկ որ-
դիքներով ամենամաքուր հայերէն խօսելիս իր
որդոց հետ: Այդ կինը և իր մանուկները իրանց
ընտիր լեզուով իմ աշխարհութիւնը դաւեցին մանա-
ւանդ նորանով, որ փոթիում հայոց ուսումնարան
չը կայ: Կինը ինքը, ինչպէս իմացայ, մի այնպիսի
քաղաքից է, որտեղի բարբառը մի բարեկական
խառնակութիւն է: Ուրեմն այն կինը — ինքնուրոյ-
նաբար սովորել և սովորեցրել է իր գաւակներին
իր մայրենի լեզուի մաքուր օրեսակը:

Մայիսի 1-ին, յայտնեղ, ասում են, գլխու է
Քուլթայից, Գորուց, Փիֆիլից և Բաթումից մեծ
բազմութիւն, որը և քաղաքից 2 վերապաշտի հե-
ռու մի ծառադարձ տեղում (парк) ուրախութիւն
է անում: Խաղերի մէջ նշանաւորներն են ձիարաւը
և կաւամարդը (մուշտիկ-կուր):

Ուր որ գնում էի, մի և նոյն խոսակցութիւնն էր ամեն տեղ մի ձկան մասն, որը քանի մի ժամանակ առաջ թափում էր և փոփոխվում էր զինուորական կապիտանի զանգով։ Սորանց պատմութեան համաձայն դա պէտք է կէտ ձուլը լինի, որը պատահմամբ թէ հիւանդութեամբ ինքնաբերական կերպով է խփած և աւանդներով խրված և ահա այդ դրութեամբ է որ մեր քաջերը նորան որսացել են։ Ձկան երկայնութիւնը ասում են 7 սառնէն և նորանից 400 պոլոզ ճարպ են ստացել։ Ձկան ծնօտը ուղարկված է Թիֆլիս։

Այդ ձկան մեռակ կաշին եթէ ինձ տային, առաւ ինձ մի հայ 1000 ր. կը տայի։

—Ի՞նչ կանէիր, հարցրի նորան։

Յարցով կը լեցնէի և կովկասեան քաղաքներում միտտովկայի կը դնէի, ասաց նա և այդպէսով թէ իմ փողը և թէ ճանապարհածախս գոյքս բերելից զատ մի քանի հարկեր բուրլի էլ սովեկոյ օգտին կը ժողովէի։

—Հատ լաւ բան կը լինէր, ասացի նորան, բայց հայի վերջին խելքն է գովելի։ Հիմա երբ ձկան կաշին գուցէ հազար և մի կտոր է եղած, այդ քու ծրագիրը կը մնայ ի հարկէ։

Ի դէպ, այժմ փոփոխում սովորական կերակուրն է վահանածուկն, որի հոխան (այս բառը և չափը շատ սովորական է փոփոխ) 25 կոպ. են տալիս։ Ուրիշ ժամանակ այդ գնով անկարելի է վահանածուկ ճարել։ Խաւարը արժէ 1 ր. ժիզկան, իսկ միւսը 60—70 կոպ.

Բիծիկ ծովի հետ խառնված տեղը (բերանը) աւազով լեցված լինելով, վաճառականները մեծ նեղութիւն են կրում իրանց ապրանքները նաւահանգստից չողնաւաւերը տանելու և բերելու։ Եթէ դուրա վրա աւելանան և ռուսական ընկերութեան (Руск. общ. Парх. и торг.) զանազան կամայականութիւնները, այն ժամանակ շատ հասկանալի կը լինի, թէ վաճառականները ինչ մեծ անհամբերութեամբ սպասում են մի ֆրանսական չողնաւաւերի ընկերութեան այս կողմերում գործ սկսելուն, որը լինելու է չուտով։ Այդ ընկերութիւնը ունի արդէն իր ագենտները այստեղ և Թիֆլիս։

Տայքեցի

ՆԱՄԱԿ ՆՈՒԹՈՒՑ

18 Յուլիսի

Յորենի հունձը վերջանալու վրա է։ Նույնու չրջակայ գիւղերի արտերից այս տարի շատ լաւ են խոտում, բոլոր լուրերը ցորենի մասին միութեամբ ասում է։ Հնձից առաջ չանախը (3 պ. 10 ֆ.) եթէ, ուրիշ բոլորի էր ծախվում, իսկ այժմ չը նայած որ հունձը չարունակվում է, չանաղի գինը դարձաւ 4 ր., 3 ր., 50 ֆ., հէնց որ սկսեն նոր ցորեն վաճառել՝ աւելի պէտք է արժանանայ։

Նույնիցը յոյս ունեն, որ այս տարի չանախը ան, ցեղալ տարիների պէս էլի երկու բուրլով առնեն։ Բոժոժը տեղ տեղ լաւ է եկել, բայց շատ տեղերում փչացել է։ Նորերում մի ֆրանսիացի, որ մօտ յիսուն գիւղերում 8 պ. սերմ է եղել բաժանած, պատմում էր, որ հաշիւ 200 պ. բոժոժ է ստացած։ Այս բոժոժի սերմը խալալայից է եղել ընրել տուած։ Տեղական սերմ ունեցողներին աւելի բոժոժ է եղել։ ՎՄակիւ վերջին համարներում ճերմամապանութեան մասին մի չարք յօդուածներ է մէջ պ. յօդուածագիր խորհուրդը (որ վերջերում յարգումից առ իր սեպակաւը չէր) թէ օտար երկրի սերմից աւելի տեղական սերմին պէտք է արժանաւորութիւն տալ՝ այդ բաւական հիմք ունի։ Տասը, տասնութերեք տարի առաջ բոժոժից սերմ հանող ֆրանսիացիք չէ թէ երեք օրից յետ սերմ անող թրքերներից սերմ չէին վերցնում, ինչպէս որ հարկաւոր էր, այլ և այդ թրքերներին կատարելուց յետ անէին էին տալիս շրով վր տաշտակների (փայտեայ մեծ աման) մէջ և ճարտել տալիս ու այդպիսով տաշտակի տակ նստած սերմը փռում, չորացնում խառնում էին լաւ սերմի հետ ու ֆրանսիա այս կողմ ու այն կողմ ուղարկում։

Ի հարկէ եթէ այդ տեսակ սերմերին նույնիցը բարձր կը գտնեն իրենց տեղականից շատ կը շահնան։ Միշտ այդպէս է. տեղականը գին չունի, ինչպէս որ կայ այնպէս թարգմանել ճերմամապանութեան մասին՝ ռուսական բնագիրը այստեղի համար շատ օգտակար կը լինէր։ Մօսկովայից մի պարտի առաջարկութիւնը՝ որ նա արել էր Թիֆլիսի ճայքերէն զբեր հրատարակող ընկերութեանը, բնագիր թարգմանութեան մասին՝ երանի թէ բնականութիւնը ընկերութիւնից։ Թարգմանութիւնը ուրախութեամբ յանձն կառնէ։ Եթէ ընկերութիւնն էլ յանձն առնէր տպագրել, կամ մի այլ անձ նոյնը խոստանար։

Նույնիցից շատերը «արագ քաշիլը» (օղի պատրաստելը) վերջացրին և միւսերն էլ վերջացնելու վրա են։ ՎՄակիւ չինովիկները դաւերում քաշիլը լինելուց վերջապէս կազմակերպել են իրենց Պատահում է որ թիվում փչանում էր օղին, երկու երեք օրերով գնում խնդրում էին, որ զան զազանը (կաթնասն) բանալու և նրանք «գետ ժամանակ չը կայ» ասելով խեղճերին յետ էին դարձնում։ ՎՄակիւ ըստինց կրակ, ըստինց օղին կ'իջնէ, ասում էին նրանք, սրանց միտքը անար հինգ է, էսքան չըրչարվում ենք, չը գեան էն զազանի փեշաբը բաց անեն որ թուրք չըթիվէր փչանար, ասում ասեալանդ անը մեր։

Մի երկու չափաւ առաջ նոր նշանակված նահանգապետ եկել էր Նուխի, մի երկու օր այստեղ մնալուց յետ, գնաց խալալայի կողմերը։ Դրա զարու պատճառով դոնէ Իփալուր ինչանից մինչև Նուխի անխմամ մնացած փոստի անպիտան ճանապարհը ուղղվեցաւ։ Քաղաքն էլ քիչ մաքրվեցաւ։ Գիւղերները փողոցի լայտերներին լոյսն էլ մեծացաւ, բայց տարաբաղաբար այժմ էլ փողոցացաւ, համարեն թէ լոռացաւ։

Նահանգապետը կարգադրել է, որ Գաբախանէն քաղաքի կենտրոնից հեռանան, արդէն յայտնի է որ սա քաղաքի հետած ու փոստ մօտ 200 քալ երկարութեամբ ու լայնութեամբ մի տեղ է, ուր կաշու գործարանն է, որի մօտից՝ ստիպված դարչելի հոտից առանց քիթ բռնելու չէ կարելի անցնել, աւելի գիւղերները։ Սրան քաղաքի միջից հեռացնելու մասին շատ է խօսվել, բայց ոմանց ձեռքով զանազան պատճառներով մնացել է անարժ ու անստան։ Տեսնելը արժան ինչպէս կը լի։

Փիչիչայ գետի մասին էլ մօտ 2000 ր. հաւաքվեցաւ նուրիցիները։ Այդ գումարով քաղաքից փեց վերստ հիւսիս մօտ երեք սառնէն բարձրութեամբ և հինգ, փեց սառնէն երկայնութեամբ ցալս ու քար են կուտել մի անաւիկ ոյժ ունեցող գետի առաջ, հիմա տեսնելը այդ ճարտարապետական ձևով կառուցած պատնէշը գոռոզ փիչիչային ինչպէս է դուր գալի։

Ղալաղյիները (քաղ. հարաւային արուարձանի) տուած խնդրի համեմատ համապատասխան հրահանով՝ մի շարքով աւելի է խուր խուր կողակներ, զինուորներ են ուղարկվում այստեղ այնտեղ զլազլի նշանաւոր աւազակ փոլաթ-Ալին բռնելու համար։ Սա մի անգամ Սիբիր է տարված, փախած այնտեղից, այժմ ծածուկ Ղալաղի մէջ է։ Ինչպէս ասում են սա աւազակութեամբ այժմ չէ պարպալում, բայց սրա անուանող աւազակութիւններ շատ շատ են կատարվում։

Հող. գարնայի հարցաքննութիւնները մի ամիս է, որ վերջացել են։ Մօտ եօթնամասուն մարդ է եղել հրաւիրած հողաբաժնութիւնը։ Իսկ նրանցից երեք, չորս հողի են ներկայ գտնվել։ Եղածներն էլ զրոգոս են մնացել թեմ, տեսչի ուղարկած Ռ. լեզուր ուսուցիչը։ Դժգոհ է մնացել նորնայն և հողաբաժնութիւնը։ Ինչպէս երևում է նա այլ ևս չի վերադառնալ, իսկ հայոց լեզուի ուսուցիչն էր, որ բաւական բարեխղճմտաբար կատարում էր իր պաշտօնը, սեպտեմբերից չէ կարող ուսուցչութիւն անել, որովհետ հող. միջոցի հրամանով նա այլ ևս իրաւունք չունի հող. դպրոցներում ուսուցչութիւն անելու։ (Գործում արժ. Ստ. քահանայ Տէր-Ստեփաննիցին, Նուխում պ. Մ. Ա. ին հրաժարեցին կարծեմ երկու քաղաքում լինող հասկացող մարդկանց միայն ցաւակցութիւնը կարող են չարժէ հող. կառավարութեան մի այդ տեսակ կարգադրութեան մասին)։ Ուրեմն այժմ հողաբաժնութեան գլխաւոր հոգսերից մէկը այն պիտի լինի, որ նոր ուսուցիչներ հրաւիրէ, բայց սա էլ մնացել է տարակուսած, որովհետ չը գտնէ ինչ միջոցներով պէտք է նրանց վարձատրէ։ Գետ քաղաքացիներից և գիւղացիներից մեծ մասը վրա այս տարվա վճարն էլ մնում է ապառիկ։ Ապաստում են թեմ, տեսչի գալուն, որ նրա հետ որոշվի գործադրելը միջոցները։

Իսկ այս մի ամիսու պէջ նույնիցիների քաշաւ գործութիւնների, այսինքն սպանութիւնների մասին առաջիկայ փոստով։

Զ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԹՈՒՑ

Մայիսի 17

Ուղարկում եմ ձեզ 30 ր. յօդուած վանի սովետանշանի նուիրողների ցուցակի հետ միասին։

Ղուրայի բնակիչք. Կ. 1 ր., Սարգիս Բարսանեանց 3 ր., Միքայէլ Աբրահամեանց 5 ր., Կ. Տէր-Սարգսեանց 2 ր., Սափրոն Մսերիկանէ (վրացի) 1 ր., Դմարի Սիմալի (վրացի) 1 ր., Նիկոլայ Բէկ Նուկալիձէ (վրացի) 1 ր., Ալ. Աւետեանց 1 ր., Դանդ Տէր-Յովնանէսեանց 1 ր., Բալաբէկ

Հաւանքեկով (տաճիկ) 1 ր., Յ. Վարդապարով 1 ր., Ա. Ղառաբեանց 2 ր., Նիկոլայ Բ. Բանաթ-Բեանց 3 ր., 5 ր., Մովսէս Տէր-Յովնանէսեանց 1 ր., Դանդ Տէր-Յովնանէսեանց 1 ր., Գարուիւն Մէլք-Գաղապեանց 2 ր., Դանիէլ Ռոստոմեանց 1 ր., Մ. Մէհրաբեանց 1 ր., Գր. Չերքեզեանց 1 ր., Աղալան Առութեանց 1 ր., Աղիգ Յովնանէսեանց 1 ր., Դաւիթ Բարաբեանց 1 ր., Սիմոն Քոչարեանց 1 ր., Մատթէոս Թարումեանց 1 ր., Սարգիս Չոչարեանց 50 ր., Պօղոս Գաւալեանց 50 ր., Մովսէս Տէր-Յովնանէսեանց 50 ր., Աղաբէկ Աւաբեանց 25 ր., Կարապետ Վաքիբեանց 30 ր., Բաբա Բաղդամեանց 30 ր., Բալաբէկ Վաւեանց 40 ր., Գրիգոր Աղիգեանց 40 ր., Խաւակ Սիմեանց 40 ր., Ոմն 25 ր., Ոմն 20 ր., Չոչար Սալամբեկեանց 20 ր., Մարտիրոս Գաղապեանց 50 ր., Պետրոս Յովնանէսեանց 50 ր., Չիւրուղ Բարսեղեանց 20 ր., Համիդ Հալի Բայրամ Ալի-օղլի (տաճիկ) 20 ր., Մարտին Մարտիրոսեանց 30 ր., Կոստանդ Վաքիբեանց 30 ր., Աւետիս Գարուիւնեանց 30 ր., Արտեմ Տէր-Գրիգորեանց 1 ր., Խալա Արութեանց 50 ր., Միքայէլ Արգարեանց 40 ր., Աւետիս Աղալեանց 20 ր., Սարգիս Վսիկանեանց 20 ր., Խալիկ Գրիգորեանց 15 ր., Գարուիւն Ղահրամանեանց 40 ր., Գարապիւ Բաղդամեանց 50 ր., Միւսում Մաճմադ-օղլի (տաճիկ) 1 ր., Թէոս Ժանարեանց 40 ր., Աւաբէլ Գրիգորեանց 1 ր., Երեմիա Բաշարեան 20 ր., Մ. Մէլքեանց 15 ր., Խալիկ Մալխասեանց 50 ր., Գարուիւն Պօղոսեանց 10 ր., Սաճակ Սարգիսեանց 10 ր., Կարապետ Աւանէսեանց 20 ր., Աւաբէլ Սարգսեանց 5 ր., Բաղդասար Աւաբեանց 10 ր., Կարապետ Խաչատրեանց 10 ր., Միրզա Հայրեանց 10 ր., Դաւիթ Թաղէտեանց 10 ր., Գասպար Պօղոսեանց 10 ր., Համբարձում Մոսէսեանց 20 ր., Խաչատուր Զախարեանց 50 ր., Բաբա Չերքեզեանց 1 ր., Բալառան Թորոսեանց 20 ր., Նիկոլայոս Դանադարեանց 50 ր., Սարգիս Ղալեանց 20 ր., Համբարձում Սիմեանեանց 20 ր., Յակովբ Մատուրով 10 ր., Սիմէոն Մոսէսեանց 20 ր., Աղալան Թառումեանց 20 ր., Դանդ Հայրապետեանց 10 ր., Աւանէսեանց 10 ր., Ալլանիկերի 20 ր., Յովնանէ Աւանէսեանց 15 ր., Գարուիւն Խանեանց 25 ր., Հալի Հալի Բաբա Հալի-Մամէդ-օղլի 50 ր., Կասպ Հայրապետեանց 10 ր., Համբարձում Սիմեանեանց 20 ր., Յակովբ Գաւիթեանց 10 ր., Ոմն 10 ր., Վարդան Յովնանէսեանց 50 ր., Ալէքսան Կովնանէսեանց 15 ր., Եփրեմ Աւաբեանց 50 ր., Կ. Միսիրեանեանց 20 ր., Յովնանէսեանց 50 ր., Պետրոս Արէլեանց 2 ր., Ոմն 1 ր., Խ. Խրամիք 1 ր., Բողդան Սալամբէկեանց 1 ր., Ա. Թալիբեանց 1 ր., Ա. Ղաղարեանց 1 ր., Ս. Աղայեանց 1 ր., Ոմն 1 ր., Անյայտ ոմն 1 ր., Անյայտ անձի լուծայ 2 ր., Ոմն չուլեցի 70 ր., Գէորգ Մարգարեանց 1 ր., Սարգիս Պարսեանց 1 ր., Ալէքսան Սարգսեանց 1 ր., Յակովբ Գաւիթեանց 1 ր., Մաճկոբեանց 50 ր., Գրիգոր Սէլման Գարուիւնեանց 50 ր., Խալապետ Մէլք-Գաղապեանց 50 ր., Նիկոլայոս Արիստոման 4 ր. 25 ր.

Ղուստրի զինուորական գունդի բնակարանի բնակիչք։

Մ. քահանայ Արզանդուկեանց 1 ր. 50 ր., Մնացական Առստամեանց 1 ր., Խալիկ Փրիւով 1 ր., Պետրոս Շաբարեանց 50 ր., Զաքարիա Յովնանէսեանց 25 ր., Ստեփան Արիստեանց 1 ր., Մարտիրոս Թանեանց 1 ր., Միքայէլ Կուսիկեանց 1 ր., Խան Շայրեանց 50 ր., Ալթա Համբարձումեանց 1 ր., Մարտիրոս Բաղդասարեանց 40 ր., Բաղդասար Լաղարեանց 50 ր., Միքայէլ Արգարեանց 1 ր., Մէլքում Ալլանիկերեանց 30 ր., Արգար Տէր-Մկրտչեանց 1 ր., Միսա Ղահրամանեանց 25 ր., Սողոմոն Արաբաբեկեանց 1 ր., Խալա Տէր-Թոմասեանց 50 ր., Գարեջ Տէր-Գալուստով 50 ր., Արտեմ Մկրտչեանց 50 ր., Մկրտիչ Տէր-Թովմասեանց 2 ր., Ալէքսանդր Մ. Աղալանեանց 3 ր., Մանաս Բէհրամեանց 1 ր., Բնդամենը 100 ր.։

Նախ ուղարկված էր 70 ր., այժմ 30 ր., միասին կը կազմի 100 ր. հանգանակված յօդուած վանի սովետանշանի Սախայն պէտք է խոստովանել ձեզ, որ ես շատ ու շատ սխալվեցայ կատարելով հանգանակողի զբըր. պատճառ եթէ իմ փոխարէն ստորագրութիւնը բացել էր մի խաղաղութիւնեամբ, հարստացած աղայ կամ բէկ, այն ժամանակ, ի հարկէ, տգէտ ամբողջ չէր երկի ժպտ և ցոյց տալով իր ծառայութիւնը, մի բուրլու փոխանակ 10 բուրլու կը ստորագրվէր ինչպէս և նկատողութիւն առեցին ինձ մի քանի վաճառականներ, Հասկանալի է որ եթէ հասարակութիւնը այսինքն հայեցուած ունի բարեգործութեան նպատակի վրա, եթէ նա մեծ նշանակութիւն է տալիս հանգանակողի աղայու-

թեան աստիճաններին, և ոչ թէ գործի նպատակին առաւել ևս ներկայ ճշմարտութիւն, երբ կարելի է ասել, թուրքաց հայերի վերածնութեան յառաջդիմութիւնը կախումն ունի տաճկարեան հայ զինուորական բարձրութիւնից, հասկանալի է կրկնում եմ, թէ որքան նոքա ոգևորված էին աղապարական ու մարդասիրական զգացումներով, երբ տալիս էին իրանց կոպէկները յօդուած սովաւահ եղբայրներին։ Միայն այն երեկոյն է արժանի ուրախութեան որ մեր լուսնրական եղբայրները իրանք յայտնեցին ցանկութիւն նուիրել իրանց լուսն վանի սովետականներին։

Ն. Աբրահամեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԹԵՐ

ԽԱՐԿՈՎԻՑ պ. Ռուբէն Կոստանեանցից ստացանք 30 բուրլ յօդուած վանի սովետանշանի, նուիրատուների հետեւայ ցուցակով։ Եղիարեթ Վէլքեանց 25 ր., Մարիա Գոնչարова 1 ր., Ա. Միլեւսեանց 1 ր., Ռուբէն Կոստանեանց 3 ր., Բնդամենը 30 բուրլ։

Այս օրերս, երբ Թիֆլիսում անձրև էր գալիս, քաղաքիս կուրիա անուանված մասում կարկուտ էր եկել։

Քանի մի օր առաջ հասաւ Թիֆլիս Գրիգոր Եպիսկոպոս Աղափրեան, որպէս Թիֆլիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ։ Լաւ է որ սրբազանը միայն ժամանակաւորապէս է ուղարկված և դեռ հաստատված չէ, որպէս թեմական առաջնորդ. այդ մեզ հնար կը տայ տեսնել թէ ինչ տեսակ մարդ է Աղափրեանը։

Յուլիսի 21-ին մեծ հանդիսով օծեցին ԹԻՖԼԻՍԻ Հաւաքար թաղի ս. Միսա եկեղեցին, որ բանդված էր, և այժմ նորոգվեցաւ։ Պատարաբ ժամը 10-ին սկսվեցաւ ս. Էջմիածնի եկեղեցում Աղափրեան Եպիսկոպոսը ներկայ էր և օծեց եկեղեցին։

Թիֆլիսից ոչ հեռու գտնվող Մարտգոյի գիւղից մեզ հաղորդում են, որ այս օրերս անպայման չափորոշները արել են այնտեղի ցորենի դէղերը։ Այդ չափորոշութիւնը ժողովուրդը վերաբերում է հացի չափներին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՆԳԼԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԻ ՆԵՍԵԸ

Անգլիական համայնքների ժողովի յուլիսի 23-ի նիստի ժամանակ Բայա կառավարութեան ուշադրութիւնը դարձրեց Փոքր-Ասիայի և Հայաստանի գործերի դրութեան վրա և Բերլինի դաշնագրի 61-ր յօդուածի առիթով խնդրեց կառավարութեանից դուրսբերուներ ներկայացնել։ Չարլզ Դիլի, արտաքին գործերի մինիստրի օգնականը խոստացաւ դուրսբերուներ ներկայացնել, որքան հանգամանքները կը ներեն։ Հայաստանի մէջ գործերի դրութիւնը աւելի վատ է, քան թէ Թուրքիայի մի այլ բաժնի մէջ և այնտեղ կատարված հարստահարութիւնների չափազանցելը անհարկն է։ Անգլիական կառավարութիւնը այդ հարցի առիթով պիտու թիւններ անպայման համաձայնութիւնը ստացաւ։ Յաւալի է, որ Բ. Գուռը իր պատասխանով մերժում է անգլիական հիւպատոսների իրաւացի գեկուցումները Հայաստանի մէջ տիրապետող գործերի դրութեան մասին։ Անգլիան բաւականացած չէ Թուրքիայի խոստումներով, բայց այժմ անկարելի է յայտնել, թէ ինչին կը ձեռնարկի անգլիական կառավարութիւնը։ Արտաքին գործերի մինիստրի օգնականի կարծիքով Անգլիան իր իւրաքանչիւր քայլը կանի պետութիւնների հետ նախապէս համաձայնելուց յետոյ։ Մի և նոյն նիստի ժամանակ Գլադստոն մի քանի բացատրութիւններ տուեց։ Նա ընդդէմ էր այն կարծիքին, իրր թէ Բ. Գուռը յետաձգում է

վերանորոգութիւնները մտնելը, որովհետեւ Անգլիայի բարեկամութիւնը չէ վաշտում: Թիւրքիան անգլիական պահպանողական կառավարութեան ժամանակն էլ յետաձգում էր վերանորոգութիւնները իրագործելը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻ ՇՈՎԱԾՆԵՐ 30889 Բ. ԳՐԱՆ ԴԵՄ

Կաղերները մէջ կարգում են հետեւեալ տեղեկութիւնները:

Զանազան աղբիւրներից եկած, բայց միմեանց հետ բոլորովին համաձայն լուրերից տեղեկանում ենք, որ միջազգային ծովային ցոյցը Թիւրքիայի գէմ վերջնականապէս վճարված է: Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր մեծ պետութիւնները անհրաժեշտ են համարում այդ միջոցի գործադրելը, եթէ Բ. Դուռը հրաժարվի կատարել նրանց պահանջները Յունաստանի և Չերնոգորիայի վերաբերութեամբ: Եթէ Կ. Պոլսից բացառական պատասխան տրվի ոչ թէ միայն պետութիւնների ընդհանուր գրութեանը, այլ մինչև անգամ նրանց պահանջին Չերնոգորիային բաւականացնելու մասին, Թիւրքաց ջրերի մէջ անյապաղ իրեւայ մի գիւնդորական նաւատորմ, որ կազմված կը լինի ռուսական, աստրական, ֆրանսիական, գերմանական, իտալական և անգլիական գիւնդորական նաւերից:

Գիւ. ևս վճարված չէ միայն այն հարցը, արդեօք պետութիւնները կը բաւականանան նաւերու ուղարկելով, թէ այդ նաւերի վրա զորքեր էլ կը լինեն: «Հավաստ» ընկերութեան տեղեկութիւնները համեմատ Անգլիան ցանկանում է նաւերի վրա զորքերի ներկայութիւնը, Ռուսաստանը անպայման միացել է այդ ցանկութեան հետ, իսկ մնացած պետութիւնները, բացի Աւստրիայից, նոյնպէս համաձայն են միայն դաշնագրի պայմաններով: Ինչ կը վերաբերի Աւստրիային, նա սկզբունքով համաձայն է, որ ծովային ցոյց լինի, հրաժարվելով զորքեր տալ և պահանջելով, որ նաւատորմի մէջ իւրաքանչիւր պետութիւնից միայն երեք նաւ լինի:

Եթէ ձեւարկող պետութիւնների մէջ համաձայնութիւն է կայացել ծովային ցոյցի մասին, պէտք է ենթադրել, որ նաւատորմը 18 նաւերից կազմված կը լինի, այսինքն իւրաքանչիւր պետութիւն միայն երեք նաւ կողարկի: Այնուամենայնիւ նաւերի վրա կարող են և զորքեր լինել: «Հավաստ» ընկերութեան տեղեկութեան համեմատ Աւստրիան հրաժարվել է իր զորքերը տալ, բայց միւս պետութիւնները զորքերի ներկայութեան դէմ չէ բողոքել և որովհետեւ միջազգային ծովային ցոյցը ազդեցութիւն կունենայ միայն այն ժամանակ, երբ նաւերի վրա զորքեր կը լինեն, որոնք հարկաւոր դէպքում կը կարողանան օգնութիւն հասցնել չերնոգորիներին և յոյներին, ուրեմն պէտք է կարծել, որ զորքերի ներկայութիւնը նաւատորմի վրա նոյնպէս պէտք է վճարված լինի:

Այս բոլորը կը մեկնվի ամենակարճ ժամանակամիջոցի մէջ: Եթէ միջազգային ծովային ցոյցը վճարված է, հաշիւը չը կայ նրան յետաձգելու կամ ուշացնելու, որովհետեւ այդպիսի դանդաղութիւնը յոյս կը տայ Կ. Պոլսի կառավարութեանը լսանդարելի եւրոպական համաձայնութիւնը: Անգլիական լրագրիչների հաղորդած լուրերից երևում է, որ Թիւրքաց կառավարութիւնը վերջին ժամանակներում մի քանի յուսահատ փորձեր է արել և բուլղարական համաձայնութիւնը լսանդարելու համար: Այդ նպատակով նա գիւնդ է գերմանական և ռուսաց կառավարութիւններին, նրանց գանազան խոստումներ անելով և թէ պէտ պետութիւնները մերժել են Բ. Դրան առաջարկութիւնը, այնու ամենայնիւ թիւրքաց կառավարութիւնը յոյս ունի հասնել իր նպատակին: Արքան կուշանայ միջազգային ծովային ցոյցը, այնքան Բ. Դրան մէջ կամ ընդհանուր ընդգրկմանը թեան օգին:

Կ. Պոլսից ստացված վերջին լուրերից երևում է, որ Բ. Դրան պատասխանը պետութիւնների ընդհանուր գրութեանը այնպէս է կազմված, որ տեղիք է տալիս նոր բանակցութիւններին Բերլինի կոնֆերանցիայի վճարված փոփոխութեան համար: Այդ փորձի առաջնաձեւը համար ամենալաւ միջոցը ծովային ցոյցն է: Միջազգային նաւատորմը կարող է առաջ Թիւրքաց ջրերի մէջ երևալ և այնուհետեւ կանգնել Յունաստանի ավերի մօտ: Այդ միջոցով արեւելեան վերջին հարցերը անելի շուտ և խաղաղութեամբ կարելի է վճարել:

ԲՈՒՅԱՐԻԱ

Սօցիալից «Polit. Corresp.» լրագրի գրում են յուլիսի 15-ից:

Բօլզարական կառավարութիւնը զխաւարական ուշադրութիւն է դարձնում գիւնդորական զորքերի վրա: Այդ կողմից մանաւանդ նշանաւոր են գիւնդորական միւնիստրի երկու կարգադրութիւնները: Ստրասնիցիական մեծ նշանակութիւն ունեցող Ռախման տեղի մօտ կազմվում է աշնանային բանակ: Այնուհետ կը հաւաքվին ամեն տեսակ զորքերի ներկայացուցիչները և զօրախազեր կը կատարեն, որոնց ներկայ կը լինի բօլզարական իշխանը: Ասում են, որ այդ խաղերին ներկայ կը լինի մի ռուս օձիկցի, որպէս զի կարողանայ դադար փար կազմել բօլզարական միլիցիայի առաջադիմութեան մասին: Զինուորական միւնիստրի միւս կարգադրութեան համեմատ բօլզարական իշխանութեան հարաւարեւելեան մասնում նշանաւոր գիւնդորական ոյժեր են հաւաքվում: Այստեղի մահմեդական բնակիչները հաւատացնում են, որ այդ կարգադրութիւնը արված է այն պատճառով, որ Բօլզարիան դիտաւորութիւն ունի յարձակվել Արեւելեան Բուլղարիայի վրա: Երբ եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները մէկը հարց է առաջարկել բօլզարական կառավարութեան զորքերի այդպէս կենտրոնացնելու մասին, արտաքին գործերի միւնիստրը պատասխանել է, որ բօլզարական զորքերը Արեւելեան Բուլղարիայի զորքերի հետ միացած մտադիր են զսպել աւազակների այն խումբերին, որոնք այդ երկու երկրների սահմանների վրա ամեն տեսակ անկարգութիւններ են անում:

ՆԱԽԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 14 յուլիս 80

Յունաստանի դէմ պատերազմի պատրաստութիւնները կը տեսնուին, Մանթենիկոյի գետագանդ ևս կը մեկնի Կ. Պոլսէն և քիչ ատենէն նորա հետ ալ պատերազմը կը սկսի: Ահա այս է Բ. Դրան պատասխանը եւրոպական ծանուցագրին: Հայոց համար սինչ կայ, քանի որ յեղափոխութեան երկիւղ չունի կառավարութիւնը և ոչ պատերազմի վտանգ առ ինչ: Հայաստանի բարեկարգութիւններն փութացնէ Բ. Դուռը արդէն Եւրոպիոյ դէմ հակառակ է և լաւ գիտէ թէ Հայաստանի համար մի քանի բարեկարգութիւններ ընելով Եւրոպայի հետ պիտի չը հաշուի: Այսօր կը լսնի թէ վահան է ֆէնիկի վանի կառավարել ընտրուել է և այս լուրը բաւական ստոյգ կըսեն, և թէ Պատրիարքարանը դիվանակի է այս ընտրութեան գէմ Պատրիարքարանի գլխավորութեան պատճառը սա լինելու է, որ վահան է ֆէնիկի իբր Հայաստանի կառավարել չընտրուի, այլ գաւառի մը իւր պաշտօնավարութեան ժամանակը երաշխաւորաւ չէ: Ինչն ապահովութիւն չունի որ վահան գահացուցի կառավարված ժամանակ Բ. Դրան կողմէ մեծամեծ դժուարութեանց չը պիտի հանդիպի: Վերջապէս կը նկատուի թէ Բ. Դուռը այն ընթացքը պիտի լսնի, որ ցոյց տայ թէ հայ կառավարի մը օգտակար չը կրնար լինել հայոց և

նոցա դժգոհութիւն կը պատճառէ: Վահան է ֆէնիկի քաջ օրէնադէմ մ'է, արդարութեան գործոց պաշտօնէն խորհրդական է և մեծ մասւոյ կարողութեան տէր է: Սակայն ընտ հայոց կողմէ համակրութիւն չէ վաշտած, ընդհակառակն ամենքն զնա տաճիկ մը տալի տաճիկ կը համարեն: Գուցէ հասարակաց կարծիքն խաբուի, որովհետեւ չեմք լըտած որ վահան է ֆէնիկի ազգին վնաս մը հասուցած լինի: Աւստրիոյ կայսեր կամ Ֆրանսիայի կայսրուհին Կ. Պոլսի գալու ժամանակ հրաւերի յապաղման ինչի մը կայ, ահաւասիկ բոլորը այս է: Վահան է ֆէնիկի ազգային գործոց չէ միջամտած, ահա այս է իրեն դէմ եղած հակակրութեան պատճառը: Բայց ինքն, երբ այս խնդրոյն վրայ իրեն հարցում ըրած են, կը պատասխանէ՝ Բ. Դրան հայ պաշտօնեային երբ ազգային գործոց մէջն են, զիրենք մատնի կը նկատէք, ձեր այն համոզումը որպէս իրաւացի լինէն չեմ ուզեր դատել, սակայն երբ ևս իմ պաշտօնս և ազգին շահերն իւրարու համաձայն չը գտնուի, ազգային գործոց չեմ խառնուիր, որպէս զի ոչ և է դժգոհութեան տեղի չը տամ, կարծեմ թէ դո՞ լինելու էք: Ինչ կը պահանջէք միւսներէն, ոչ ապաքէն ազգային արդարեւէն քաշուի: Եթէ վահան է ֆէնիկի գործելու ազատութիւն տրուի, վահան համար շատ օգտակար կրնայ լինել: Բայց այսպիսի ընտրութիւնը հայկական խնդրը չը վերջացնէր. ոչ դո՞ դո՞ է Բ. Դրան սուրած պատասխանէն: Կ. Պոլսէն մի քանի օր առաջ տեսակցութիւն մը տեսնուաւ Պատրիարքի հետ և այս խնդրոյն մէջ նորա կարծիքներն լսեց և խոստացեր է որ հայոց փափագնաց համեմատ շարժին ըստ բաւականին, սակայն ուրիշներն կըսեն թէ Պատրիարքը Կոչնի հետ ունեցած տեսակցութիւններէն դո՞ չէ: Անձկանօք կը սպասէինք սրբազանի ձառնի, զոր պիտի արտասանէր Ազգ. Ժողովը բացման ատիւն և լոյս մը կը ապաւինէր: Այդ բացումը մայիսի մէջ տեղի պիտի ունենար, բայց դանազան պատճառներով յետաձգուեցաւ: Մայիս 11-ին խոսուած բազմութիւն մը մայր եկեղեցին դիմեց, բայց Պատրիարքը ներկայ չը գտնուեցաւ, նամակաւ մը Մատթէոս եպիսկոպոսի կը յանձնէ բացումը: Մեր փափագը գոհացնելու սա տոյժ միայն կը զիջէ առ Մատթէոս եպիսկոպոսը դրած նամակի մէջ. «Ժողովը բացէք և Աստուծոյ օգործութեան յուսահատ չը գտնուի: ինչ իմաց տուէք: Եթէ գործերն այս վիճակի մէջ մնան ամենքն աղէկ միջոցն Աստուծոյ յոյս ունենան է, ուրիշ բան չէ:—Գիւնդարեւական աշխատութիւններն կը շարունակեն, ամեն կերպով թրքաց վիճակագրական մեծամեծ սխալներն ցոյց կը տրուին և Եւրոպիոյ թերթերն բաւական լաւ ուղղութեամբ կաշխատեն մտերմօք մշակել ի ներպատ հայոց, սակայն ինչ որ ալ ըլլայ Հայաստանի մէջ փրցելի չարութիւն մը դիւանագիտական միջոցներուն մեծ օգնական կրնար լինել, բայց ինչ օգուտ—Բողոք, բողոք, միշտ բողոք. ասիկէ զատ ուրիշ գէշը չունենք. Ժողովը բացման օրն փնտցիկ հանրագիր մը ներկայացնելով, Ազգ. Ժողովը ուշադրութիւն կը հրաւերէ վահան մէջ ի գործ դրուած հարստահարութեանց վրայ. այս բողոքը թէպէտ գործնական արդիւնք մը չը պիտի կրնայ ունենալ, բայց պատասխան մ'է այն հեռագրիներուն, զոր կառավարութիւնը հրատարակել կուտայ Հայաստանի վիճակը խիստ դժոյզացնել ցոյց տալով: Խրիմեան հեռագրով կը հաղորդէ թէ դո՞ պիտի լինին եթէ սուլթանին կամեցած յանձնաժողովը ընտրուի վահան վիճակն ընտել համար: Վահան մէջ քովքերը բարեկարգութեանց յանձնաժողով մը ընտրած են, յորում 9 տաճիկ և 6 հայ, մէկ ասորի և մէկ հիւսիս: Հայերն բողոքելով մեկնած են, վահան զի քանի որ հայք մեծամասնութիւն կը կազմեն, ինչպէս հնար է որ Ժողովը մէջ փրցելու անհրաժեշտ ունենան: Ասեն մը ձայն չէին հաներ, բայց ժամանակներն փոխուած են:

Ազգ. Ժողովը իրեն ատենապետ ընտրեց Սերվիշէն Էֆենդի. բոլիչ է, տէրութեան գործոց մեծ անտրութիւն ունի, ընդհանուր յարգանք և համակրութիւն կը վայելէ, կարեւի մարդ է և Ժողովը կառավարելու մեծ կարողութիւն ունի, Բ. ատենապետ ընտրուած է Սերվիշ-Պոլի Գարուլթիւն: Կարեւոր նախաթուղթեան խնդիրն չը կարգադրուեցաւ դեռ. Կարեւոր Միլիթարիսիկ եպիսկոպոսը կը պնդէ թէ ըստ տէրութեան օրէնքի ինքն իբր հնազոյն նախաթուղթ է. Պատրիարքարանը կը պատասխանէ թէ թէպէտ և կառավարութիւնը այդպիսի օրէնք մը հրատարակեց քանի մը տարի առաջ, բայց Պատրիարքարանը բողոքեց և անգործադրելի մնաց: Մատթէոս այս նիւթին վրայ յօդուած մը կը գրէ, յորում կամրատառնէ թէ Թեմանը-Նիքիտարը իբր կողմնակից հովիւական հայոց. այս յարձակումը անիմալ է. իբր անկողնակալ թերթ մը թէմանը-Նիքիտար թէ հովիւական հայոց և թէ մեր առաքելութիւններն կը հրատարակէ ա-

ռանց մեկնութեանց. միթէ յանցաւոր է նա, որովհետեւ խնդրոյն բոլոր կէտերն կը լուսարանէ. Թեմանը-Նիքիտար ազգային բարձրագոյն խնդրոց մէջ ազգային դատը արիւարար պաշտպաներ, իւր խմբագիրներն բանտարկվեցան, թերթը քանդեց, զոցուցեցաւ, ջնջվեցաւ, և նիւթապէս մեծամեծ հարուածներ կրեց կառավարութիւնէն, իբր հայոց յեղափոխական օրգանը և այդ միջոցին ինչու «Մատթէոս» չէր հրատարակել թէ Թեմանը-Նիքիտար «Հայոց» զիմակի ներքեւ երևնալով, ինքզինքն իբր ճշմարիտ հայ ցուցնելով և պարզամիտ հայոց ստակովն ապրելով, հայոց ազգին զգացմունքը կը վերաւորէ: Կարծեմք թէ մեր թերթերն քիչ մը աւելի օգնութիւն ունենալու են:

Հայոց վիճակագրութեան մասին առանց երկար գրելու կը խրկեմք այս խնդրոյն վրայ եղած մի քանի հրատարակութիւններու: Ասանց մէջն է Թեմանը-Նիքիտարի հրատարակած նշանաւոր անձի մը մէկ վիճակագիրը, ասոր մէջը կը տեսնուի որ խաւանացեալ հայերն ալ իբր հայ հայոց զիմակի մէջ մտած են, և այս ալ խնդրութիւն է: Երբ ատեն մը «Մշակ» մասնատական հայերն հնարեց, շատ դէմ խօսեցան. մէք չենք ուզեր գրել թէ մահմետական հայերն մինչև որ աստիճան հայ համարելու ենք, բայց քաղաքական օգուտներն մտածելն լաւ կը լինի: Հայաստանի մէջ կամ կրօնը ազգութեան հիմնաւոր ենք, կամ ցեղը. առանց իմաստասիրական խղճահարութեանց, կարծեմք պարագայից համեմատ շարժին աւելի օգտակարն է: Արդ այսօր ցեղն ազգութեանց հիմնաւոր հայոց թիւն մօտ մէկ միլիոն կը բաղմնայ և հայերն այսու բազմաթիւ կը լինին. Եւրոպայ, որ այսօր կրօնքով չէ որ ազգերն կը ճանչէ, այլ հրէայ, բողոքական, քաթօլիկ Գաղղիացի, Անգլիացի Գերմանացի կան, չը պիտի կրնայ մեզ առարկել թէ փրաւունք չունինք: Հայոց թեւահամարը ըրած ժամանակիս ցեղը մեզ հիմն ունենալ. մանաւանդ թէ երբ տեսնեն որ կրօնական նախապաշարմամբ այսպիսի մեծ առաւելութիւն մը ձեռքէ կը հանմք, բաւական տխուր գաղափար մը պիտի ունենան թէ մեր քաղաքագիտական տաղանդի վրայ և թէ մեր ազատամտութեան վրայ. այսու հանդերձ մեք դարձեալ կը գոչեմք փրաւի աշխարհ քան թէ մի սկզբունք:

Հայկակ

ՄԵԼԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԲՐԻԶ, 24 յուլիս: Ընդհանուր խորհուրդների անդամների վերջնական ընտրութիւնները, բայց Կորնիլիյից, այս հետեւաները ունեցան. ընտրված են 902 հանրապետականներ և 372 պահպանողականներ:

10 ՆՈՒՅ, 24 յուլիս: Պարլամենտի մէջ տրվեցաւ 282 ձայներ 50 դէմ: Հարցը նորից ծագեցաւ էր իրաւագրական հոգիների կապալառուների վարձատրութեան մասին:

Ս. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻ, 25 յուլիս: Պետական բանկի 5% տոմսիւր առաջին շրջանի արժէ 93 ռ. 75 կ., երկրորդ 92 ռ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսիւր արժէ 223 ռ. 50 կ., երկրորդ 222 ռ. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսիւր արժէ 91 ռ., 25 կ., երկրորդ 90 ռ., 77 կ., ոսկի 7 ռ. 87 կ.: Ռուսաց 1 ռուբլ 1օնգոնի վրա արժէ 24, 91 պէնս, ռուսաց 100 ռ. Բերլինի վրա արժէ 126 մարկ 25 պֆ., Համբուրգի վրա 212 մարկ. 50 պֆ. Փարիզի վրա 263 ֆրանկ. 25 տանխիմ: Բօրայի տրամադրութիւնը թղլ է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խնդրում ենք մեր այս տարվայ բաժանորդներին, որոնք դեռ ևս «Մշակ» տարեկան վճարը հասցրած չեն խմբագրութեանը, շուտով ուղարկել մեկ իրանց վրա մնացած պարտքը:

Բոլոր թէ նոմաները, թէ թղթակցութիւնները և թէ փողերը պէտք է ուղարկվին անմիջապէս խմբագրութեանը հետեւեալ հասցեով. Въ Тифлисе, Въ Редакцію газ. «Мпакъ»:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ገ ሲ ገ በ ት ፊ ቱ ሰ ሀ ሃ ት ያ ኅ በ ት የ ሀ ፔ ሃ ሂ ቱ ኒ የ ሀ ሰ ሀ የ ሀ ሄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՇԽԵՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ձեռ-
նարկներ աշխատադրութեամբ Ն՝ ՍԻՄԻՈՆԵԱՆՑԻ:
Ե. ՏԱՐԻ նախագիտելիք (իբրև հայրենագիտութեան դա-
սերի օրինակ տրուած է թիֆլիզի հայրենագիտութիւնը),
հինգ պատկերներով, գինն է 35 կոպ.
Բ. ՏԱՐԻ մասն ուսումնական և բնական երեսուն և մէկ
պատկերներով, գինն է 60 կոպ.
գումարով առնողներին զիջումն կը լինի: Մամուլի տակ
է Գ. ՏԱՐԻՆ, մասը քաղաքական:

14—20

ԳՆԱՍՄԱՆԻՆ

անուամով, ծախվում է Եւրոպայի բոլոր մեծ քաղաքների ղեղապատներին և դրօզխատների մասնաշառքերին հետո նիւթի հնարող Ֆարմացիի մասնաշառք ու վ. ԿԱՌՈՒՄԱՍՈՒԴ ղեղապատն մէջն առնելով, վարչախայտով, Էլէկտրական փողոց, թիվ 95, Գալմանյանի մէծ արդիւնքը արժէ 7 պարչալա-
կում 50 կօպ, աւելի փերը 30 կ.: Պէտք է բը-
գուշանայ խարսխաբուններին:

17—25 Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԱՆԻՒՅ
բաղադրի մի մասնաւոր զպրոցի
Համար պահանջվում է մի հմուտ
ՎԱՐԺԱՊԵՏ ՀԱՅՈՑ ԵՒ
ՌՈՒՍԼՅ լեզուների համար
խիստ նպաստաւոր պայմաննե-
րով: Ցանկացողները կարող են
գիմել ՀԵՂԻՆՕՎԻ բարվան-
սարան պ. ՄԵԼԻԲ-ԱԶԱՐԵԱՆ-
ՅԻ կանստոր:

၃၈၄၄၆၈၃

ՀԻՄՆԵՐԻ ԶՆՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱ-
ԽՈՏԵԼԸ 9-ԻՑ ՄԻՆՁՆԻ 1 ԺԱՄԸ:

Երկուշաբթի. Պատվոն սկի կանանց
Հիւանդ. Գորաւ և վիշ ներքին հ, Ի տիւ
ն անց կանանց և երկխանքի հ, Քիւււա-
ն անց խորուրդական և աշքերի հ,
Շտու մբ օրակի վիշերական և կաշու հ,
Բաւաւ և ան փղական և հոգեկան հ:

Երբ Զարթիկ Մինկեվիչ խորհրդակցական հ., Վ. Ղորոզ վանեական և բողազի հ., Բեյլա աշքի հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Երսան Գլխաշուշով, Լիսինցեվ և Վ. Երմիկով և Վ. Ներսիսյան հ.:

Զորք շարժի. Լիսիցեյի և Ռուդ-
վոլովիկի ներքին հ., Շտեյմբորսկի
կենտրոնական և կաշու հ., Աստուա ճատու-
քով կանանց հիանալով իննների:

Հին գշաբթի Վարդավառյան
բողոքը Հ., Բ տիրեալն ց կանանց և երկ-
խաների Հ., Լիսիցե վ և Վերսիլ շվ
նեբբին Հ., Քիւչարեանց սիֆիլիսի և
սեռական օրգանների Հ.:

ԱՆՐԲԱԹ. Քաղբօսակի կանանց Հ.Մինկէվիչ խորաբարական Հ., Կրասնօգլինադօվ և Լիւսնցի ներքին Հ., Բախուտօվ մանկաբարձական, կանանց և երիտանրի Հ., Շտէյմբուրսկի և Աստվաճառուրօվ վնէրական և կաշու Հ. Բարաւի ծղակն և ներքին Հ.:

Եւ թաթ Լիւրիցե վ և վեր մի շե վ
 ներքին հ, Բաբով կուրծքի հ, Եանկ օ
 վսկի վեներական և կաշու հ:

Բացի այդ բժիշկ Վ. ԳՕՐՕՎ բժշկանոց
մեջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդ
ներին ամենայն օր երեկոյեան 4—6 ժամը:

Բժիշկ Բաբաեվ չորեքշաբթի օրերը ա
ռաւօտեան 9-ից մինչև 11 ժամը ընդու
նում է իր տանը բժշկանոցի հիւանդներին

էլէկտրիական բժշկութեան և ներքին համար: Բնակարանը զանաւարտ է Սերգիւս կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Ատամնաբոյժ Օբրնխտ աղքատ Հիւան
դներին բժշկանոցի տոմսակով ընդունում
ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առա-
ւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում
մանկաբարձ կլին Հիւանդ կանանց ընդունելու

Համար:
Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՎԵՐԶՆԱԿԱՆ ՎԱՃԱ-
ՌՈՒՄՆ

Մինչև այս ԱՄՄՎԱՅ ՎՆԵՋՔ ԱՆ-
ԳԼԻԱԳԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Արժույթու գա-
լերէի մէջ: Գալականք (աղամարդկեանց
և կանանց), Թաղկիսանք, պարուսնա-
պաղանքներ, Տառաւէտ ջրեր, Տարցանանք,
Դէպօլքներ, կողպէքներ, սորցներ, դա-
նանքներ, գլաւներ, ցիտրաւ-մարգնդա-
ծարաւից և այլն. այժմ ծախուի՝ են
250%—500% էժան քան թէ ուրիշ տեղ:

9—10

Համեմատելից անկլիական խանութի թեղնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. Ֆուռտի հայն թէյերի հետ, որոնց ուրիշ խանութքում 30%-ով թանկ են ծախվում և խանութի ֆուռտը 2 րուրխանոց թէյը, ըիչ անց 4 ր. ծախվող թէյի հետ:

40—100

Երևանայ Ազ. Հոգ. Դպրատնային Հարկադր է ուսւ լեզուի Համար մի ուսուցիչ Արտեմբերից, շարժական 26 դասին կրսւ տանայ 1000 բուրլ տարեկան ուժիկ: Յանկացողները պէտք է զոնէ մի արքունի միջնակարգ դպրոցում աւարտած լինեն եւ ծառայութ իննն Հայոց լեզուին եւ:

Տեսուչ Երևանայ թիմական դպրանոցի Ս.
Բէր-Նազարեանց:

3-5

Ծախսվում են ԳՐԱՍԵՂԱՆ, ՀԱՅԻ ՍԵՂԱՆ և
ԱԹՈՌԵՆՆԵՐ: Եկխազկետինակայա փողոց № 40
ԹԻՖԼԻՍԿԱԻ:

3-5

ՍՈՒԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ԵԳՐՈՐ ԿԱՍՈՒՄՕՂ ԵՒ ԸՆԿ. յայտնում է առևտրական սան գործերով բոլոր Հետաքրքրվածներին, որ գործերի ընդարձակվելու ծանուցի այդ սան գլխավոր գրասենյակն օգտատեր 1-ից կը տեղափոխվի Գժականի տան ներ յարկը Դանօնկալա փողոցի և Նրվանակալա Հրապարակի ասիլունի վրա: Տուրքերին տան և մուտքերին տեսնալու Համար գրասենյակն Հասարակ օրերում բաց է լինում առա- հան 9 ժամից մինչև 2, իսկ կիրակի օրը 8—10 ժամ: Կնում է 1 և 2 փոխառութիւնն հանկին և ծախում է նրանց այն պայմանով, որ զինը 12 ամիսներին ընթացցում Հատու- լի է: Այլ պայմաններով մի տոմսի զնոյը տարվա ընթացքում մասն ունի տարածից 20 Համարներին, որոնք յոյց են տրված վկայականի մէջ չորս տիրածներին: Յանձնարա- թեամբ գնում է և ծախս մ է մասնաւոր անձանց ամեն տեսակ անշարժ կաշիքեր, կոմի- տով ծախում է ասրանքներ և նրութեր: Ծախում է ասլված պայմանադիրներ, բնակա- ներ, խանութներ և դատարկ տեղեր ըբէհով տալու համար: Տուրքերին մինչև նոր կար- քերունքը վճարում է:

1) Պահելու համար մինչև պահանջելը $4\frac{1}{2}\%$, պայմանադր $5\frac{1}{2}\%$, 2) տուրքերին 6 ամսով $5\frac{1}{2}\%$, 9 ամսով $6\frac{1}{2}\%$, 1 տարով $7\frac{1}{2}\%$ $1\frac{1}{2}$ տարով $8\frac{1}{2}\%$, 2 տարով և ավելի 9%: 3) Այլ ընկերություն 1 կապի պայ ունեցողներին մասնադր պայմանադր տուրքերին 9%: Գարտաժուր հավելյալայնի մի ձևի աղյուսակով թիվը փոխ տարու ժամանակ առնուժ է փոխ ժամանակով 10%: Ինչ տարաթ ժամանակով 9%:

Այս ելույթի մանրամասն տեղեկություններ ցանկացողները կարող են ստանալ ամեն օր գրասենյակի կառավարչից:

9-10 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

the

ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Օղբառուի 20-ից կը սկսուի քննութիւնները և նորեկները ընդունելութիւնը տղայոց և օրիորդաց 4—15 տարեկան հասակը:

ՏՄԱՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԵՐԱՆՈՒՄ ԲԱՆԱԿԱՆ
ՑՈՒՆԵԼՈՒ Է ՊԱՆՍԻՐՈՒ ՌԻՐ ԿԸՆԳՈՒՆԷԼԵՆ
ԳԻՇԵՐՈԹԻԿ ՆԻ ԿԻՍԱԳԻՇԵՐՈԹԻԿ ԱՇԽԱՏԱՆԻ
ԿԵՐՏՆԵՐ:

Բ. Միջիմառնեանց

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱԿԱՅԱ ՊԵԿԱՐԵՒՄ
և կից կը բացվին ՍԵՆՆԱԿՆԵՐ, որտե-
րեկի կը լինի ստանալ ԿԱՖԵ, ԵՐԿՈՒԱՐ-
Յ և պատրաստված Հանքային զանազա-
նի:

28—40

ԹԻՖԼԻՍԻ ՊՐԹԳԻՄՆԱԶԻԱ ՎԵՐԱՅԱՅՐԱՆՅ,
 «այդ ճիափան և մասնաւոր ուսումնարանն
 ում 8 ՏԱՐԻ դաստիարակութիւն արած մի
 ՐԲՏԱՍԱՐԻ ներկայ սեպտեմբերի 1-ին ջան
 անում է ՈՒՍՈՒՅՅԻ ՊԱՇՏՈՆ ստանալ բա
 առապէս ՌՈՒՍԱՅ լեզուից և ԹՈՒԱԲԱՆՈՒ
 ԲԵՆԻՅ, ինչպէս ԹԻՖԼԻՍՈՒԴ, նոյնպէս և դա
 ւաներում է Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ
 ՆԱՅԻՆԱՅԻՆՆԵՐԻ ԳՐԱՎԱՀԱՌԱՆՈՅՆԵՐՈՒՄ:

5-22

ՄԻՆԱՍ ԳԻՒՂԱՏՏԱՆ, որ կանտորայ ունի
ԽԱՐԻՑ քաղաքում, ընդունում է ամեն տեսակ
ԱՌՆԻՏՄԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՕ-
ՈՒՐՕՆՈՎ կատարելու անյապաղ, ամեն-
այն ճշտութեամբ, և դիմում է պ. պ. վա-
ճառահաններին, առաջարկելով իր ծառայու-
թյունը:

4-5